# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 մարտի 2021 թվականի N** 136-Ա

### ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման պահանջները՝

***որոշում եմ.***

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Գրիգոր Թադևոսյանին:
2. Մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնին՝ եռօրյա ժամկետում մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներին, մարզպետարանի համակարգի կազմակերպություններին և ընկերություններին շրջաբերականով տեղեկացնել «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և մարզպետարանում նշանակված պատասխանատու անձի մասին:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտը համակարգողին՝ եռօրյա ժամկետում պատասխանատու անձի կոնտակտային տվյալները տեղադրել մարզպետարանի պաշտոնական կայքի առաջին էջում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

30.03.2021

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600095

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. Պողոսյան

2021թ. մարտի 30
ք. Կապան